

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»Ը ՈՒՍԵՐՆԵ

(Փավատոս Բուզանդ, «Պատմություն հայոց»: Թարգմանությունը զոբաբախել է ծառայող Մ. Ա. Գեորգյանի, խմբագրությամբ Ս. Տ. Երեմյանի: Հայկական ՍՍՌ Գիտությունների Կադեմիայի հրատարակչություն, Երևան, 1953 թ.):

Ռուսերեն լեզվով լույս է ընծայված հայ մտավոր մշակույթի հնագույն և ամենանշանավոր հուշարձաններից մեկը՝ Փավատոս Բուզանդի «Հայոց պատմությունը», որը տպագրության է պատրաստել Հայկական ՍՍՌ Գիտությունների Կադեմիայի պատմության ինստիտուտը:

Հին հայ գրականության այդ նշանավոր երկը, որ առաջին անգամ տպագրվել է 1730 թվականին Կոստանդնուպոլսում, մինչև 1933 թվականը ունեցել է գրաբար լեզվով յոթ հրատարակություն: Երկու անգամ այն տպագրվել է նաև օտար լեզուներով, որոնցից առաջինն է Ֆրանսերեն թարգմանությունը՝ Մ. Էմիլի Դեբուրի, 1867 թվականին, իսկ երկրորդը՝ Լաուերի գերմաներեն թարգմանությունը, որ լույս է ընծայված Կյոլնում 1879 թվականին:

Հին հայ պատմագրության այդ արժեքավոր աշխատության հրատարակությունների արժանապատիվ թերությունն այն էր, որ գիրքը մնում էր անմատչելի հայ ընթերցող լայն շրջանի համար: Նրանից կարող էր օգտվել միայն գրաբարին և օտար լեզուներին լավ տիրապետող մտավորականների շատ նեղ ու սահմանափակ շրջանը միայն: Բացի այդ, գրքի հրատարակիչներն ու խմբագիրները հարկ եղած աշխատանքը չեն կատարել գրաբար բնագրի բազմաթիվ աղճատումներն ու աղավաղումները վերացնելու համար, չեն մտահոգվել բնագիրը Փավատոսի բոլոր ձեռագրերի հետ բաղդատելու, Փավատոսի նշանավոր երկի լիարժեք հրատարակության շնորհակալ խնդրով: Գրքի հրատարակություններին միշտ էլ, որ կցվել են անհրաժեշտ ծանոթագրություններ, իսկ հաճախ կցվել են այնպիսի ծանոթագրություններ և մեկնություններ, որոնց հեղինակները ոչ միայն ի վիճակի չէին լինում բացահայտելու այն առանձին հակասությունները, որոնք կան Բուզանդի գրքում, այլև ապակողմնորոշում էին ընթերցողին՝ արտակայանով սխալ ու անհիմն տեսակետներ հայ նշանավոր պատմիչի արժեքավոր աշխատության վերաբերյալ: Այսպես, նրանց համար մինչև վերջ առեղծվածային մնաց այն հարցը՝ թե ո՞վ է այդ աշխատության հեղինակը, այդ «Պատմության» ժամանակի, բնագրի և լեզվի հարցերը, ինչպես նաև այն հարցը՝ թե այդ «Պատմությունը» ամբողջությամբ է հասել մեզ թե ոչ: Ավելին՝ Փավատոսի մեկնիչներից ոմանք (Հ. Մ. Չամչյան և ուրիշները) այն տեղը հասան, որ սկսեցին շարախոսել հայ մեծանուն պատմիչին՝ անվանակոչելով նրան հայոց աղբի «Թշնամի», «բախտախնդիր», «խռովարար»:

Փավատոս Բուզանդի նշանավոր երկի հետ կապված վիճելի շատ հարցերը իրենց պատշաճ գիտական լու-

ծումը ստացան միայն սովետահայ գիտնականների կողմից: Այստեղ ամենից առաջ պետք է նշել Հայկական ՍՍՌ Գիտությունների Կադեմիայի իսկական անդամներ՝ Մանուկ Աբեղյանի և Ստեփան Մալխասյանի արժեքավոր աշխատությունները¹, որոնց մեջ անհերքելի փաստերով ժխտվում է «Պատմության» հեղինակի հույն լինելու առասպելը և գիտականորեն ապացուցվում, որ «Պատմությունը» գրված է եղել հայերեն և հայի ձեռքով՝ հինգերորդ դարի երկրորդ կեսում:

Փավատոս Բուզանդը և նրա անմահ երկը ըստ արժանիության գնահատվեցին և ընթերցող լայն հասարակայնության սեփականությունը դարձան միայն Սովետական Հայաստանում: Այս ուղղությամբ հատկապես մեծ աշխատանք է կատարել հանգուցյալ Կադեմիկոս Ստ. Մալխասյանը, որին պատկանում է հայ մեծ պատմիչի նշանավոր երկի առաջին աշխարհագրաբար թարգմանության երախտիքը, որով և այդ երկը դարձավ հայ ընթերցող հասարակայնության սեփականությունը:

Փավատոս Բուզանդի «Հայոց պատմություն» ռուսերեն առաջին հրատարակությունը նշանակալից երկվույթ է՝ հայ հին գրականության հարուստ ժառանգությունը ռուս ընթերցող հասարակությանը ծանոթացնելու ասպարեզում:

Գրախոսվող աշխատությանը կցված է առաջաբան, որ ռուս ընթերցողին ծանոթացվում է Փավատոս Բուզանդի «Հայոց պատմության» պատմական-ճանաչողական մեծ նշանակությունը: Այդ աշխատությունը, որ ներկայացնում է հայ ժողովրդի հեռավոր անցյալի— 319—384 թվականները ընդգրկող ժամանակաշրջանի իրադարձությունների պատմությունը, կարևորագույն աղբյուր է 4-րդ դարի հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի ուսումնասիրության համար:

Բացառիկ մեծ է գրքի նշանակությունը Հայաստանի 4-րդ դարի սոցիալական շարժումների, «ազատներձի» և «անաղապատների» միջև եղած ներհակությունների, ինչպես նաև օտարերկրյա կեղծքիչների դեմ հայ ժողովրդի մղած տեական ու համառ ազատագրական պայքարի ուսումնասիրության ասպարեզում:

1. Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք առաջին, Երևան, 1944 թ.— Ստ. Մալխասյան, Փավատոս Բուզանդի «Հայոց պատմություն» գրքի աշխարհագրաբար թարգմանությանը կցված ներածությունը, Երևան, 1947 թ.:

Ուշագնա նշվեց, Փափստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը գրված է 4-րդ դարի երկրորդ կեսում: Այդ շրջանը հայ ժողովրդի պատմության այն մղձավանջային ժամանակաշրջանն էր, երբ Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդիան ուժեղացնելով իրենց տնտեսական և քաղաքական ճնշումը Հայաստանում, ձգտում էին վերջինս վերածել իրենց գաղութի և հայ ժողովրդի վրին փաթաթել ստրկության դարավոր լուծը: Անհրաժեշտ էր քորթոքել ժողովրդի ցամաքի հուրն ընդդեմ օտարերկրյա բռնակալների, բարձրացնել նրա ինքնագիտակցությունը, դաստիարակել նրան օտարերկրյա զավթիչների դեմ մղած հերոսական պայքարի վառ օրինակներով, պայքարի հանել նրան ընդդեմ պարսկական կեղծիքի՝ հանուն Հայաստանի ազատության և անկախության:

Փափստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը հենց ծառայում էր այդ նպատակին: Պատմության միջտրված է Մամիկոնյանների տան ներկայացուցիչներին՝ դուցազն զորավարներ Վաչեի, Վասակի, Մուշեղի և Մանվելի քառյակին վեճ կերպարի փայլուն նկարագրություններ: Ըստ պատմիչի, նրանցից լուրագնացությամբ մի հսկա էր, օժտված ֆիզիկական մեծ ուժով և քառյակուն ազնիվ հումկություններով, անսահման նվիրվածությամբ դեպի Հայրենիքը և պատրաստ՝ ցուցադրելու դուցազնական խիզախություն և արիություն՝ օտարերկրյա լծից հայ ժողովրդի ազատագրության համար մղված մարտերում:

Սրբ պարսկական Շապուհ Թագավորը Վասակ Մամիկոնյանին սպառնում է մահվան դատապարտելու և նրան անվանում է «ազվեհ», Վասակն անհողորդ պատասխանում է, որ ես էի այն հսկան, որ երբ աշուտքի վրա էի հենվում, ձախ կողմի լեռն էի գետին կոխում, իսկ երբ ձախ ուտքի վրա էի հենվում, ձախ կողմի լեռն էի գետին կոխում, այսինքն տապալում էի և՛ պարսից և՛ հունաց թագավորներին:

Վարազդատ Թագավորը Մանվել սպարապետին համեմատում է «անմատույց լեռան հետ»՝ Վերջինս, ըստ պատմիչի, մահամեծիվ վիճակում իր զինակիցներին կոչ է անում «ուրախությամբ հանձն առնել մահ աշխարհի համար» և ճմլվում էր նրա սուրբ հոգին, երբ տեսնում էր, որ հրաժեշտ է տալիս աշխարհին «վատթար» մահով, այսինքն՝ անկողնում պառկած և ո՛չ թե պատերազմի դաշտում, Հայրենիքի, «մեր կանանց և որդիք» համար մղվող ճակատամարտում: Ըստ պատմիչի, Մանվելը անմահ դուցազն էր, որի մարմնի վրա՝ օմի դրամի չափ ողջ տեղ չէր մնացել, այլ խոցված էր պատերազմների մեջ:

Պատմիչը վառ կերպով նկարագրում է հայ ռազմիկների օտարերկրյա կեղծիքի դեմ մղվող պայքարում ցուցաբերած անհուն հայրենասիրությունն ու հերոսությունը: Հայ ռազմիկների գնդերը թշնամու վրա հարձակվում էին ինչպես «մի բարձր լեռ», «հզոր և անշարժ աշտարակ»: Պատմիչը հիշատակում է, որ Մուշեղի գնդից «բաց ու կրակ» էր թափվում:

Պատմիչը, ինքը լինելով մեծ հայրենասեր, «վատանշան», «շարագործ», «պիղծ» մականունով է մկրտում դավաճան Մերուտան Արծրունուն:

Այս ամենը լավագույն հերթումն է այն ստահոգ պնդման, որ իբր թե Փափստոս Բուզանդը, հույն լինելով, տատել է՝ հայերին Բուզանդին հույն, քախտախնդիր, «խռովարար» համարելու տեսակետը այլևս հիմնովին մերժված պիտի ընդունել:

Փափստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը կարևոր աղբյուր է նաև Հայ եկեղեցու պատմության համար: Այնտեղ տրված է Ս. Գրիգորի և նրա որդի Արիստակեսից մինչև Վրթանեսի և հաջորդ կաթողիկոսների գործունեության լուսաբանությունը: Գրքում հատկապես մեծ տեղ է տրված ներսես Մեծի կյանքին ու գործունեությանը, սրին պատմիչը ներկայացնում է իբրև ազնիվ ու առաքինի հոգևորական, մի անձնավորություն, որը զրոհորում է մեծ հոգատարություն դեպի աղքատները, բաց է անում դպրոցները և նահատակվում իր սրբազան պարտականությունները կատարելու ճանապարհին: Ըստ պատմիչի տեղեկության, ներսես Մեծը ատում էր նենգությունը, որկրամոլությունը, անառակությունը և այլ արատներ, հանդիսանալով ճշմարտության անխնդ մարտնչող, իր ժողովրդին հավատարմորեն ծառայելու օրինակ: Գրքում տրված է Հուսիկ կաթողիկոսի լզերազանցված նկարագիրը, որը, ըստ պատմիչի, «Սուրբ Հոգու խոսքերը կրում էր»՝ ինչպես մեջքին էսպած սուր, իսկ շնորհատուր Հոգին նրան լցրեց գիտությամբ, որ աղբյուրի նման ոռոգում էր լուռների ականջները և նրանց սրտերի երկիրը» (տե՛ս Փափստոս Բուզանդ, «Հայոց պատմություն», աշխարհագրոր հրատարակություն, էջ 107):

Մեծ պատմիչը անարգանքի սյունին է դաժմում իրենց հավատը կորցրած, Հայրենիքին ու ժողովրդին դավաճանած առանձին կրոնականներին:

Փափստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը, բացի իր պատմական բացառիկ նշանակությունից, ունի նաև գեղարվեստական արժեք: Գիրքը կազմված է, գերազանցապես, ժողովրդական բանահյուսության, ավանդական գրույցների ու վեպերի հիման վրա: Զափազանց հուզիչ են և գեղարվեստական բարձր մակարդակով գրված այն տողերը, որոնց մեջ պատմվում է՝ թե ի՛նչպես Արշակ Թագավորը Շապուհի վրանի տակ պարսկական հողի վրա իրեն զգում է նվաստ, ընկճված, պատրաստ խոնարհվելու պարսկական թագավորի առաջ, իսկ երբ գալիս է վրանի այն մասը, ուր հայկական հող էր ցանոթ, նոր ուժ ու կրոնով է ստանում, խրոխտ պատասխաններ է տալիս Շապուհին՝ մոռանալով, որ ինքը գտնվում է նրա ճիրաններում: Այդ դրվագում Արշակը հիշեցնում է Անթիոն՝ հին հուսկական առասպելի այն հերոսին, որն անպարտելի ուժ ու կրոնով էր ստանում իր մայր հողից, երբ ամեն անգամ հավում էր նրան:

Պարզ ու վճիռ է Փափստոսի լեզուն. նրա մոտ գրեթե բացակայում են բռնազրույթի ու արհեստականորեն թխված բառեր: Մեծ պատմիչի երկը հայոց լեզվի անսպառ հարստության, հնչողության վառ դրսևորումներից մեկն է և զուր չէ, որ առանձին բանասերների կողմից այն հուշակված է իբրև «սակեղեն լեզու», որի մեջ «լուի բնությունն է խոսողը»:

Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» ուսանողներն թարգմանությանը կցված են ընդարձակ ծանոթագրություններ, որոնց մեջ ընթերցողը կգտնի իրեն անծանոթ բառերի, պատմական, աշխարհագրական անունների, պատմիչի առանձին մուր ակնարկությունների բացատրությունները, որը մեծ չափով օգնում է տեքստի լիակատար իմացությանը:

Գրախոսվող աշխատությունն ունի հատուկ անունների, հայկական տերմինների ցանկեր, ինչպես նաև՝ Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» հրատարակությունների և այդ կարևոր երկի վերաբերյալ մամուլում հրատարակված աշխատությունների և հետազոտությունների լիակատար բիրիդգրաֆիա:

Գիրքը հրատարակված է շքեղ կազմով, 3.000 տպաքանակով:

Փափստոս Բուզանդի ուսանողներն ներկա թարգմանությունը շնորհակալ մի գործ է: Այդ թարգմանության միջոցով ուսւ ընթերցող հասարակությունը կծանոթանա Փափստոս Բուզանդի— հին հայկական խոշորագույն պատմագիրներից մեկի հետ, որի հաղորդած տեղեկությունները կարևոր են ո՛չ միայն հայ ժողովրդի, այլև Արևելքի պատմության համար ընդհանրապես:

ԲԱՆԱՍԵՐ

